ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՅՈԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 2-6-րդ մասերը, 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Յոթերորդ գումարման Ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբն ստեղծել յոթ պատգամավորից:

2. Յոթերորդ գումարման Ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբը ձևավորել «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի խմբակցության հինգ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության խմբակցության և «Լուսավոր Հայաստան» կուսակցության խմբակցության մեկական ներկայացուցիչներից:

3. Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի կազմում պատգամավորներն ընդգրկվում են խմբակցության ներկայացմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի կողմից ընդունվելու պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2019 թվական, հունվարի 14
Երևան

ԱԺՈ-001-Լ

ՅՈԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Հանձնախմբի նախագահ՝

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Վահագն	«Իմ քայլը» կուսակցության խմբակցություն

Հանձնախմբի քարտուղար՝

ԴԱՎՈՅԱՆ Արփինե	«Իմ քայլը» կուսակցության խմբակցություն

Հանձնախմբի անդամներ՝

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Սիսակ	«Իմ քայլը» կուսակցության խմբակցություն
ՊՈՂՈՍՅԱՆ Քրիստինե	«Իմ քայլը» կուսակցության խմբակցություն
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մարիա	«Իմ քայլը» կուսակցության խմբակցություն
ԻՍԱՅԱՆ Շաքե	«Բարգավաճ Հայաստան» կուսակցության խմբակցություն
ԿՈՍՏԱՆՅԱՆ Աննա	«Լուսավոր Հայաստան» կուսակցության խմբակցություն